

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐՈՊԱՅԻՄ

ԲԵՌՆԱՐ ՈՒՏԻԵ

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՍԿՋԲԱՎՈՐՈՂԸ ՖԻՆԱՆՍԱՅԻՄ. ԳԻՅՈՄ ԴԸ ՎԻԼՖՐՈՒԱ՝

Անցյալ տարի Փարիզի Արևելյան կենդանի լեզուների բարձրագույն դպրոցում նշվեց հայերեն լեզվի ուսուցանման 200-ամյակը: Արդարև, 1798 թվականից սկսյալ, այդ դպրոցում դասավանդվում է հայերենը: Օգտվելով առիթից, առանց խոր ու ամբողջական մի ուսումնասիրություն կատարած լինելու հավակնության, թույլ տվեք ներկայացնել գործը մի մարդու, որ համդիսացավ հայագիտության նախակարապետը Ֆրանսիայում:

Գիյոմ դը Վիլֆրուա: Նրան առավել լավ ճանաչելու համար անհրաժեշտ է հետազոտություններ կատարել գրադարաններում և արխիվային ֆոնդերում: Ծնվել է 1690 թ. մարտի 5-ին Փարիզում, ուր և մահացել է 1777 թ. ապրիլի 4-ին: Գիտական աշխատանքների նկատմամբ ուներ մեծ նվիրում ու ջանասիրություն:

Վիլֆրուան իր կրթությունն ստացել է Տիրոնի Բենեդիկտյան կրոնավորների հոչակավոր քոլեջում: Զսանելու տարեկան էր, երբ ընդունվեց Տերուայի Հոգևոր Մեծ Մեմարան, իսկ երկու տարի անց նշանակվեց Հոգևոր Փոքր Մեմարանի ուսկոոր: 1716 թ. վերջին Բզանսոն քաղաքում ձեռնադրվել է քահանա և վերադարձել Փարիզ, որտեղից այլևս չի հեռացել:

Գիյոմ դը Վիլֆրուան քարեկամական սերտ կապեր է հաստատում քազմահմուտ գիտնական Դոմ Բեռնար դը Մոնֆոկոնի հետ և, դասական հայերեն սովորելուց հետո, 1729 թ. հրավիրվում է այն դասավանդելու Սեն-Ժերմեն դե Պրեի արքայաբանում, որտեղ այն ժամանակ հատուկ ջանք էր գործադրվում՝ զարկ տալու համար արևելյան լեզուների ուսումնասիրությանը: Չսահմանափակվելով մեծ հետիճակություն վաշելող այս արքայաբանում իր կատարած աշխատանքով՝ Վիլֆրուան մտածում է աշակերտներ պատրաստել նաև փարիզյան տարբեր համայնքներում: Բացի Սեն-Ժերմեն դե Պրեից, աշակերտներ պատրաստելու նրա առաջարկությունն ընդունվում է միայն Սենտ-Օմորե փողոցի Կապուչինյան կրոնավորների կողմից: 1744 թ. նա այստեղ հիմնում է երրայերեն լեզվի

* Սույն հոդվածը թարգմանությունն է այն զեկուցման, որ ֆրանսիացի հայագետ և կովկասագետ, ֆրանսիայի ազգային գիտահետազոտական կենտրոնի անդամ, ԺՈՒՀի համալսարանի հայագիտական ամբիոնի դասախոս պրոֆ. Բեռնար Ուսիեն ներկայացրեց 1998 թվականի հոկտեմբերին Երևանում տեղի ունեցած միջազգային գիտաժողովում, որը կազմակերպել էր Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիան և Երևանի Պետական համալսարանը, և որի շնորհիվ ընթացքում ընթերցվեցին հայոց լեզվին ու գրականությանը, հայ պատմագրությանը ու մշակույթին վերաբերվող շուրջ երկու տասնյակ զեկուցումներ, նվիրված էր Փարիզի Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների Ազգային ինստիտուտի (INALCO) Հայագիտական ամբիոնի հիմնման 200-ամյակին (Թարգմանիչ):

ուսումնասիրմանը, նվիրված Կապուչինյացիների ընկերակցությունը՝ բաղկացած արևելագետներից, ովքեր հավաքվում էին Կապուչինյանների վանքում՝ Հիմ Կտակարանը մեկնաբանելու համար: Վիլֆրուան, 1752 թվականից սկսած, դառնում է մահ երրայներնի դասախոս Թագավորական քոլեջում:

Հայոց լեզվի դասավանդմանն առնչվող բազմաթիվ հետաքրքրական վկայություններ են հասել մեզ: Առաջինը 1738 թ. հոկտեմբերով թվագրված մամակ է՝ ուղղված Վենետիկի՝ Սուրբ Ղազար վանքի Մխիթար արքաճորը՝ ի պատասխան վերջինիս կողմից ուղարկված հայերեն հրատարակությունների մի ցուցակի: Սեն-ժերմենի արքայադրամում դասավանդելու (մահ իր) համար մա Մխիթարին պատվիրում է Աստվածաշունչ, Նոր Կտակարան, Ավետարաններ, Սաղմոսարաններ (մեծադիր և փոքրադիր), հայոց լեզվի քերականություն, հայատառ թուրքերենով հայոց լեզվի քերականություն (1727 թ. հրատարակություն), Սողոմոնի առակները, Ըահ-Աբրահի պատմությունը, Ըաշոց և այլն:

Տասը տարի հետո, ինչպես կտեսնենք, Վիլֆրուան ձեռնամուխ է լինում Հիմ Կտակարանի հայերեն թարգմանությանն ուսումնասիրմանը: «Այժմ հորիզոնն արդեն ընդարձակված է: Իմ այս պատվերը վերաբերվում է թե՛ Սուրբ Գրոց թարգմանությանը, թե՛ եկեղեցական պաշտամունքին և թե՛ պատմական, քանաստեղծական և այլ բովանդակությամբ գրքերին, որոնց ծնունդ է տվել տաղանդաշատ հայ ժողովուրդն անցյալում» (Մխիթար արքաճորն ուղղված մամակից, 7 հոկտեմբեր, 1738, հրատ. Հայր Ս. Ըեմենտեանի, Բազմավեպ, 1979, էջ 120-121):

Ի՞նչ է մեզ հասել Վիլֆրուայի երկերից: Նրա մատենագրական ժառանգությունը բաղկացած է տպագիր և ձեռագիր գրվածքներից:

Տպագիր գործերը համեմատաբար քիչ են: Նշենք սակայն, որ նրա առաջին աշխատությունները վերաբերում են հայերեն ձեռագրերին, որոնք ձեռք են բերվել 1730 թ. Հայր Ֆ. Սեվենի առաքելության կողմից Թագավորական գրադարանի¹ համար: Սրանք համառոտ տեղեկություններ են 128 հայերեն ձեռագրերի մասին, որոնք գտնվում են Ձեռագրերի մոր գրադարանում (Bibliotheca bibliothecarum manuscriptorum nova, հատ. 2-րդ, էջ 1015-1027, հրատ. Բ. դը Մոնֆոկոն, Փարիզ, 1739 թ.): Նույն տարում, Թագավորական գրադարանի ձեռագրացուցակի առաջին հատորում, որը վերաբերում էր Արևելքի ժողովուրդների ձեռագրերին, մա նկարագրում է 138 ձեռագիր (էջ 76-99): Այսպիսով, Վիլֆրուան հանդիսանում է հայկական ձեռագրերի մի ցուցակի ֆրանսիացի առաջին հեղինակը:

1735 թվականից սկսած, մա հայկական Ծարակնոցից հրատարակում է թարգմանություններ. «Վանահայր ***-ի (= Գիյոմ դը Վիլֆրուա) մամակը մեծարգո հայր ***-ին (= Բեռնար դը Մոնֆոկոն) այն մասին, որ մա վերջինիս ուղարկել է մի շարք հայկական շարականների ֆրանսերեն թարգմանությունը, որոնք ստեղծվել են հինգերորդ կամ վեցերորդ դարում և նվիրված են Սուրբ Հովհաննես Մկրտչի ծննդյանը և Հիսուս Քրիստոսի

¹ Այժմ Ֆրանսիայի Ազգային գրադարան:

Տաճար լնծայման հնորհրդին»։ Նամակի հեղինակի և հասցեատիրոջ անունների քաջակալությունն ակնհայտորեն ցույց է տալիս այն՝ զգուշավորությունը, որ մոլեռանդ հավատացյալների միջև մղվող կոիվների այդ ժամանակաշրջանում ձեռք է առնվել՝ այդ թարգմանությունները հրատարակելու համար «Գիտությունների և գեղարվեստների հիշատակարաններ» ժողովածուում։

Սուրբ Գրիգոր Լուսավորչին նվիրված մի ներքող, որը վերագրվում է Սուրբ Հովհան Ոսկեբերանին, Մոմֆոկոմին է հանձնվել քննության և ստուգման համար, և նա այդ ներքողը մտցրել է ոչ թե հայերեն, այլ Վիլֆրուայի լատիներեն թարգմանության մեջ՝ Ս. Հովհան Ոսկեբերանի երկերի հումարեն և լատիներեն ամբողջական հրատարակության 11-րդ հատորում։

1751 թ. սեպտեմբերին Վիլֆրուան, Հայսմավորչից քաղելով, հրատարակում է Սուրբ Քրիստափորի կենսագրության ֆրանսերեն թարգմանությունը Հիսուսյան հայրերի հիմնադրած «Տրեվույան հանդես»-ում։

Վիլֆրուայի 1751-1754 թթ. վերջին ծանոթ հրատարակությունները դարձյալ վերաբերում են Սուրբ Գրքին. «Վանահայր ***-ի (=Վիլֆրուայի) նամակները՝ ուղղված իր աշակերտներին, որպեսզի դրանք ծառայեն որպես ներածություն աստվածեղեն գրվածքների և մասնավորապես մարգարեական գրքերի իմաստը հասկանալու համար...»։

Հիացմունքի է արժանի, արդարև, այն հետևողականությունը, որն ուղեկցվել է Վիլֆրուայի գիտությանը նվիրաբերված ողջ կյանքի ընթացքում, ուր հայերենը գրավում է առանձնակի տեղ։ Չմոռանա՞նք, որ նրա գործերից մի քանիսը կորել են, ինչպես՝ Մաշտոցի թարգմանությունը. «Ես այդ թարգմանությունը փոխ տվեցի, քայց այն ինձ երբեք չվերադարձրին»։ Ներսես Շնորհալու ստեղծագործություններից կատարած նրա թարգմանություններն արդյոք լույս տեսնել են...

Այժմ անդրադառնա՞նք Վիլֆրուայի անտիպ գործերին։ Դրանց մի մասը վստահաբար դեռ շրջանառության մեջ է, քանի որ «Բրիլ» ֆիրման 1984 թ. վաճառքի էր հանում Վիլֆրուայի կողմից ընդօրինակված ասորերեն մի Սաղմոսարան։ Մենք բախտավոր ենք, որ մեր տրամադրության տակ ունենք մի կարևոր ձեռագիր (հմր. 49, 353 էջ, 24×36 սմ) հետևյալ վերնագրով. «Համառոտ տեղեկություններ Թագավորական գրադարանի հայկական ձեռագրերի մասին» բերված Կ. Պոլսից 1730 թվականին»։ Թագավորական գրադարանի վարիչ Հայր Բիմյոնի կողմից գրված առաջաբանում ասվում է, որ դա միայն «մի նմուշ է այն աշխատության, որ նա (Վիլֆրուան) ուզում է շարունակել հայերեն լեզվով գրված թե՛ ձեռագիր և թե՛ տպագիր քոլոր հատորների մասին, որոնց արդեն գտնվում են Թագավորական գրադարանում, և որոնց վրա պիտի կարողանամ նորերն ավելացնել տալ»։ Այս ձեռագիրը Հայր Բիմյոնին հանձնվել է 1735 թ. ապրիլի 27-ին։

Ձեռագիրն իր Նախաշավիղի առաջին մասում պարունակում է հայոց լեզվի մասին մի շարադրանք (էջ 8-27), որ մի տեսակ մախամուտ է հանդիսանում Ֆրանսիայի Ազգային գրադարանի հմր. 278 հայերեն

ձեռագրի, որի մի քիչ ավելի ուշ թվականի է (1738): Այս վերջին ձեռագիրը ընդգրկում է հայոց լեզվի հիմունքները, ուսումնական մի ձեռնարկ՝ գրված Սեմ-ժեքմեն դե Պրեի աշակերտների համար: Հարկավոր է հրատարակել այս երկու ձեռագրերը՝ համեմատելով դրանք միմյանց հետ, ցույց տալու համար քերականական կարգի փոփոխությունները: Օրինակ՝ 1735 թվականին այբուբենի 39 տառերից ամցումը 40-ի և 1738 թվականին 10 հոլովից ամցումը 20-ի: 1735 թվականի ձեռագիրը Նախաշավիղում պարունակում է հայոց լեզվի մասին 20 էջ, իսկ 1738 թվականի ձեռագիրը, որի միակ նյութը հայոց լեզուն է, 115 էջ, քայց կրկնակի փոքրադիր էջերով:

Բնականաբար, Նախաշավիղի ամփիճեղիորեն ամենահետաքրքրական գլուխը, ուր տրված են ինքնակենսագրական տեղեկություններ, երկրորդ գլուխն է, որի 28-39 էջերում ցույց է տրված այն «ճանապարհը, որով ես առաջնորդվեցի՝ գնալու համար դեպի հայոց լեզվի ուսումնասիրությունը»: Այս գլխից այժմ ես կկատարեմ ընդարձակ մեքերումներ, որոնք, հուսով եմ, կշարժեն ձեր հետաքրքրությունը:

«Իմ վաղ պատանեկության շրջանից,- գրում է Վիլֆրուան,- ես կրքոտ մի ցանկություն եմ ունեցել՝ ուսումնասիրելու Սուրբ Գիրքը: Տասներեք տարեկան հասակում ես հանդիպեցի եբրայերեն տառերին, որոնք հրապուրեցին ինձ: Ես սովորեցի այդ մշամագրերը և դրանց իմաստը: Բայց հենց այդտեղ էլ կանգ առա թե՛ նրա համար, որ մանկական զգացումները սովորաբար հեղհեղուկ են լինում, և թե՛ նրա համար, որ բնավ առիթ չունեցա ընթացք տալու եբրայերեն լեզվի նկատմամբ իմ ունեցած հակումին: Հինգ տարի անց, այսինքն՝ տասնութ տարիս լրանալուց հետո, զնեցի անհրաժեշտ գրքերը՝ լրջորեն նվիրվելու համար այդ լեզվի ուսումնասիրմանը... հետագայում բավականաչափ հմտություն ձեռք բերեցի եբրայերեն լեզվի ընթերցանության մեջ և սկսեցի Աստվածաշունչը կարդալ միայն բնագրով»:

Սակայն մնում էին մութ ու խրթին տեղեր, և այդ առնչությամբ կային «այնքան մեկնիչներ, որքան այս կամ այն հատվածը բացատրելու տարբեր ձևեր...», ուստի որոշեցի մեկը մյուսի հետևից ուսումնասիրել այն բոլոր լեզուները, որոնցով թարգմանվել է Աստվածաշունչը եբրայական քննարկից: Այս լայն ծրագիրն ինձ քնավ չսարսափեցրեց, ընդհակառակը, աշխատանքի նկատմամբ իմ սերն առավել բորբոքեց: Սկսեցի խաղերեն լեզվից... Այն արդյունքը, որ ես ստացա դրանից, ավելի քան երբևէ ինձ բերեց այն համոզմանը, որ անհրաժեշտ էր ինձ համար սովորել ասորերեն և, խոստովանեմ, այդ լեզվի վրա բավական երկար ժամանակ աշխատելուց հետո, ես ինձ երջանիկ զգացի, որ ձեռնամուխ եմ եղել ասորերենի ուսումնասիրմանը...

Ընորհիվ վերոհիշյալ լեզուների իմացության, որոնք թույլ էին տալիս ինձ հնագույն թարգմանություններն ընթերցել բնագրերից, ինձ քաջալերեցին, որ ձեռնամուխ լինեմ արաբերեն լեզվի ուսումնասիրությանը, որը, ճիշտն ասեմ, առանձին, անհամեմատ ավելի ծանր աշխատանք պահանջեց ինձանից, քան իմ հիշած մյուս բոլոր լեզուները...

Ես ուզեցի վերահասու լինել եթովպերենին՝ գործածելու համար նաև

Սուրբ Գրքի եթովպական թարգմանությունը: Այդ լեզվի ավելի քան 230 տառերը, որոնց ամսովոր ձևերին հարկ եղավ, ենթարկվել՝ կարդալ կարողանալու և թվանշաններին ծանոթանալու համար, չվիճարկվել ինձ: Սկսեցի աշխատել և, վերջապես, ի վիճակի եղա օգտագործելու այդ լեզուն և այն ավելացրի մյուս լեզուների վրա: Մոռացա ասել, որ հանգստյան ժամերին իսպաներեն էի սովորում, որպեսզի կարողանամ իսպաներենով կարդալ հրեաների կողմից կատարված Աստվածաշնչի այդ թարգմանությունը...

Ահա այդ ժամանակ էլ ես անդրադարձա, որ ինձ պակասում է դեռևս մի լեզու: Բավական ժամանակ էր անցել արդեն այն օրից, երբ իմ ուշադրությունն էր գրավել Ուալթերի «Հառաջաբանի» 91-րդ էջի առաջին սյունակում գտնվող հետևյալ պարբերությունը. «Արդարև, հնագույն բնագրերի մեկնաբան Գրիգորիոս Աստրին ասում է. հայտնի բան է, որ հայերը Աստվածաշունչը եթե նույնիսկ հունարենից են թարգմանել, այսուհանդերձ իրենց ձեռքի տակ եղած օրինակը համեմատել են ասորական թարգմանության հետ և այն համաձայնեցրել որոշ տեղերում»:

Պատահաբար վերստին իմ ձեռքն անցավ այդ հատվածը և, երկրորդ անգամ լինելով, այնպես տպավորեց ինձ, որ անմիջապես գնացի մի գրավաճառի մոտ, որպեսզի ձեռք բերեմ հայոց լեզվի քերականության մի ձեռնարկ և հայերեն մի բառարան: Անցավ ավելի քան վեց ամիս, և ես չկարողացա ճարել իմ փնտրած գրքերը: Վերջապես նախախնամությունն օգնեց ինձ, որ ձեռք բերեմ դրանք, և 1729 թ. ես սկսեցի ուսումնասիրել հայերենը: Բայց իմ առաջին շփումն այդ սարսափելի լեզվի հետ ինչպիսի՞ դժվարությունների առջև կանգնեցրեց ինձ...

Մյուս բոլոր լեզուները (չհաշված արաբերենը) խաղ ու պար թվացին ինձ սրա հետ համեմատած. շատ քիչու ու դժվարին մի արտասանություն, բառեր, որոնք օտարոտի և խժայուր էին ինձ համար, Հիսուսյան հայրերից Ռիփոլայի կողմից պատրաստված հայոց լեզվի քերականության խիստ թերի մի ձեռնարկ², նույն հեղինակի կողմից մի բառարան³ էլ ավելի անկատար, քան նրա Քերականությունը (որովհետև այն պարունակում էր հայոց լեզվի բառապաշարի միայն մեկ վեցերորդ մասը), և վերջապես մի Քրիստոնեական՝ տպագրված այնքան անուշադիր մարդկանց կողմից, որ նրանում չկա մի էջ, ուր չվիտան կա՛մ երկու մասի բաժանված բառեր, կա՛մ էլ բառեր՝ միացած այլ բառերի:

Ամեն ինչ նպաստում էր, ինչպես այդ կարելի էր զգալ, զգվանք պատճառելու և վիատեցնելու ինձ: Բայց ես հավաքեցի իմ ողջ քաջությունը, վերակենդանացրի իմ ամբողջ եռանդը, և այլևս ոչինչ ինձ չգարմացրեց: Սովորեցի 10 հոլովումները՝ յուրաքանչյուրը բաղկացած 10 հոլովից, նետվեցի խոնարհումների և անկանոն բայերի վրա, որոնց թիվը շատ մեծ է, և ավելի քան վեց ամիս տաժանելի աշխատանքի լծվեցի՝ հայոց լեզվի լոկ նախատարերքը յուրացնելու համար: Վերջապես հասա այն բանին, որ

² Միլան, 1624 թ.:

³ Միլան, 1621, Ա. հրատ., Փարիզ, 1633, Բ. հրատ.:

սկսեցի մի քիչ հասկանալ իմ հայերեն Ջրիստոնեականը, բայց երբ անդրադարձա, որ շատ հեռու չեմ գնա լեզվի վերաբերյալ այդքան վատ մի ուղեցույցով, 1731 թ. գնացի Թագավորական գրադարան և այնտեղից վերցրի հայերեն մի Աստվածաշունչ: Ահա այդ օրվանից սկսեցի կատարել միաժամանակ երկու աշխատանք, ուզում եմ ասել՝ սկսեցի լրջորեն ուսումնասիրել հայոց լեզուն (որիմ հատկացնում էի իմ հետմիջօրեները) և «Երգ երգոց»-ի թարգմանությունն այն եղանակով, որի մասին խոսեցի վերևում, այսինքն՝ երբայերեն բնագիրը համեմատելով խաղերեն, ասորերեն, հույներեն, արաբերեն, եթովպերեն, հայերեն և իսպաներեն թարգմանությունների հետ»:

Հայր Սալիեմ⁴ Վիֆորուայի քարեկամներից մեկը, որը Սուլյուում էր ծնվել և նույնպես երբայերեն լեզվի դասախոս էր Թագավորական քոլեջում և տպագիր գրքերի վերահսկիչ Թագավորական գրադարանում, բայց մանավանդ գրաքննիչ, խորհուրդ չուվեց Վիֆորուային՝ հրատարակել «Երգ երգոց»-ի մեկնաբանյալ թարգմանությունը «այնպիսի մի ժամանակ, երբ կրոնի դեմ ապստամբած ազատախոհներն ամեն ինչ նենգափոխում են»:

«Հայերենը ոչինչ չկորցրեց «Երգ երգոցի»-ի վրա իմ կատարած աշխատանքը դադարեցնելուց հետո: Ես վերադարձա Թագավորական գրադարան, որտեղ գտա հայերեն հնացած և հազվադեպ գործածվող մի քառարան: Վերցրի այն և արագ վերադարձա իմ աշխատասենյակ, որպեսզի հենց նույն օրն էլ սկսեմ օգտագործել: Եվ պետք է ասեմ, որ ավելի մեծ հաջողության հասա, քան սպասում էի: Հայերեն Աստվածաշունչի վրա իմ կատարած մոտ երկու տարվա աշխատանքի շնորհիվ յուրացրել էի հայոց լեզվի ամենասովորական բառերը և դրանց օգնությամբ էլ կարողացա հասկանալ այդ քառարանում գործածված այն բառերը, որոնք անհրաժեշտ էին ինձ: Աշխատանքի մկատմամբ իմ ունեցած սերն ու եռանդը ինձ ստիպեցին, որ առանձնաճամ Փարիզից դուրս, խաղաղ մի վայրում՝ զբաղվելու համար միայն իմ հայերենով: Վերադարձրի Աստվածաշունչը և դրա փոխարեն վերցրի հայերեն մի ձեռագիր, որի մեջ կար հայ կաթողիկոսներից մեկի մի գրվածքը:

Գնալով գյուղ՝ ուրախությամբ մկատեցի, որ ընտրել էի սքանչելի մի գործ. դա Մեծն Ներսես Դ-ի «Ընդհանրական թուղթ»-ն էր, որն այդ կաթողիկոսը գրել էր Հայաստանի Հայրապետական գահին բազմելու առիթով: Աշխատեցի այն թարգմանել, բայց դա այնքան էլ հեշտ չեղավ. յուրաքանչյուր մախադասություն մի նոր դժվարության առաջ էր կանգնեցնում ինձ: Արևելյան բազմաթիվ ազգերի դարձվածաբանական արտահայտությունները, միացած հայերենին հատուկ դարձվածքներից, որոնց դեռ չէի հանդիպել, կարծես մրցում էին միմյանց հետ, որպեսզի ստիպեն ինձ հետ կանգնել այդ աշխատանքից:

Բայց որովհետև Նախախնամությունն ինձ նախապատրաստել էր արևելյան լեզուների ուսումնասիրման այդ դաժան աշխատանքին, մինչ այդ իմ ձեռք բերած գիտելիքների շնորհիվ ես կարողանում էի մեկը մյուսի

⁴ Կլոդ Սալիեի մասին տե՛ս Լեոն Պիա-Լաշապել, Կլոդ Սալիե (1885-1981), Դիժոնի ակադեմիայի գիտական աշխատությունները, հատ. 125, 1981-1982, էջ 221-239:

հետևից հաղթահարել իմ առաջ ծառացող բոլոր դժվարությունները։ Ներսես Դ-ի Թղթի թարգմանությամբ ես միացրի հայ աստվածաբան Սուրբ Գրիգոր Նարեկացու մի ճառի թարգմանությունը։ Այս վերջինի առավել խրթին ոճը մտածել տվեց ինձ միառժամանակ հրաժարվել այս թարգմանությունից։ Բայց իմ քաջությունը կրկնապատկվեց ի տես բոլոր դժվարությունների, և վեց ամսվա ընթացքում, օրական 13-ից 14 ժամ աշխատելով, կարողացա գլուխ բերել «Հնդհանրական թղթի» և Նարեկացու ճառի թարգմանությունը։ Այս հաջողության ուրախությունը, սակայն, երկար չտևեց. չորս ամիս երկարաձգվող մի հիվանդություն ինձ հասցրեց մահվան դուռը, հիվանդություն, որի պատճառը այն ուժասպառությունն էր, որը վրա էր հասել իմ ձեռնարկած գործի պահանջած ծանր աշխատանքի հետևանքով։ Դեռևս ապաքինման շրջանում էի գտնվում, երբ ուզեցի վերադառնալ իմ սիրելի հայերենին։ Այն տանը, ուր ես ապրում էի, բարեբախտաբար գտա այդ լեզվով տպագրված մի քանի գրքեր։ Ժամանակ առ ժամանակ կարդում էի այդ գրքերը, և երբ վերականգնվեց իմ առողջությունը, սկսեցի զբաղվել այս կամ այն տեղից ձեռք բերված հայերեն որոշ կտորներ թարգմանելով։ Վերջապես 1734 թ. մարտի սկզբներին նորից կարողացի Ներսես Դ-ի հիշյալ գործի իմ թարգմանությունը և, այն համեմատելով բնագրերի հետ, բավականին ճշգրիտ գտա։ Ապա, որոշ տեղեր վերանայելուց ու սրբագրելուց հետո, եկա այն եզրակացության, որ թարգմանությունն արածանի է հրատարակման՝ համոզված լինելով մանավանդ, որ այդ կտորը կընդունվի հաճույքով որպես մի նմուշ այն ձեռագրի, որի գոյությունն անծանոթ չէր ֆրանսիացիներին։ Սակայն ինքնին շատ հետաքրքրական այդ գրվածքը հրատարակելուց առաջ, անհրաժեշտ համարեցի այն առավել ևս գնահատանքի արժանի դարձնել՝ որոշ ծանոթություններ ավելացնելով, որոնց կարիքն այն ուներ։ Ուստի տեղափոխվեցի Փարիզ, Թագավորական գրադարան, որտեղ գտա բազմաթիվ այլ գործեր նույն Ներսես Կաթողիկոսից։ Այս հայտնագործությունից հետո որոշեցի առանձին չհրատարակել «Հնդհանրական թուղթ»-ը, այլ փնտրել ու հավաքել այս մեծ Հայտապետի գրչին պատկանող բոլոր երկերը և նրա «Հնդհանրական թուղթ»-ը տպագրել միայն այն ժամանակ, երբ ես թարգմանած կլինեմ նրա մեծատիպ այլ գործերը, որոնք, միանալով Թղթին, կկազմեն քառածալ տպագրական թերթի ծավալով ոչ շատ սովոր մի առաջին հատոր։

Այս հետազոտությունն էր, որ ինձ մղեց մի լայնածավալ աշխատանքի, որի արդյունքը ներկայացնում եմ այստեղ՝ «Տեղեկություն Թագավորական գրադարանի հայերեն ձեռագրերի մասին» վերնագրով։ Ես սկսեցի թերթատել այդ ձեռագրերից շատերը և տեսա, որ դրանց մեծ մասը ժողովածուներ են, որոնց մեջ խմբված բոլոր գործերը հարկավոր էր աչքի անցկացնել, և այն հետազոտությունը, որ ես ծրագրել էի կատարել, կպահանջեր միակազույնը երեք ամսվա աշխատանք։ Բնականաբար չէի սխալվել, քանի որ այդ աշխատանքն ավարտվեց այն սկսելուց միայն ինձ ամիս հետո»։

Նախաշափիղճ ավարտվում է հայերեն ձեռագրերին վերաբերող մի երրորդ գլխով (էջ 39-49), որը հանդիսանում է հայկական ձեռագրագի-

տության առաջին օրինակը, և որտեղ նկարագրված են գրերի տեսակները, հապավումները, թուղթը, թանաքը, կազմը: Տրված է նաև ժառանգորդի և Հայսմավորքի սահմանումը:

Աշխատության հիմնական մասը բաղկացած է 113 ձեռագրերի նկարագրությունից, որտեղ Վիլֆրուան չի զբաղվում տալ նաև մեկնիչի ու աստվածաբանի իր գնահատականները իբրև տվյալ ժամանակաշրջանի ներկայացուցիչ:

Այդ մասին են վկայում հետևյալ տողերը, ուր նկարագրված է «պատմությունը 38 տարեկան մի կույր անդամալույծի, որը թժշկվում է Երուսաղեմում, Հիսուս Քրիստոսի կողմից, Նրա Համբարձումից երկար ժամանակ անց»:

«Այս ստապատիր գրվածքի անմիտ հեղինակը, գրում է Վիլֆրուան, Հիսուս Քրիստոսին իջեցնում է երկնքից և Նրան բերում Երուսաղեմ, մի անդամալույծի մոտ, որի հետ տեղի է ունենում աշխարհի ամենաարտառոց խոսակցությունը, այն աստիճան, որ հեղինակը Հիսուս Քրիստոսին ասել է տալիս, թե ավետարանիչներն իրենց Ավետարաններում թխել են այն ամենը, ինչ ցանկացել են: Այս և սրա մեծն այլ անհամ խոսքերից անդամալույծը զայրանում և Հիսուսին ուղարկում է դժոխքի խորքը: Եվ երբ Հիսուս հիվանդին հարցնում է, թե որքան ոսկի կամ արծաթ կտա իրեն, որպեսզի թժշկի, անդամալույծը նրան պատասխանում է՝ ասելով, թե Նա [Հիսուս] հայտնապես Հուդայի թագավորներից մեկն է: Ահա այդ ամբարիշտ գրույցն է կազմում պատմության գրեթե ամբողջ բովանդակությունը, պատմությունը, որը բաղկացած է մոտ 13 էջից և վերջանում է անդամալույծի թժշկումով»:

Ինչպես երևում է, Վիլֆրուայի մեկնողական գիտությունը այս անգամ դուրս է գալիս արատավոր⁵:

Գալով Հայ Առաքելական Եկեղեցու ջատագովության նկատմամբ նրա ունեցած զգացումներից, ապա հետևյալ հատվածը քավական է՝ բացահայտելու համար այդ զգացումները. «Հովհաննես Կարենցու (այսօր՝ Էրզրում) տեսիլքը, ամենայն հավանականությամբ, այս հերձվածող աստվածաբանի հնարած բանն է՝ արհամարհանք ներշնչելու համար յուրայիններից հույների, փրանկների և ասորիների հանդեպ:

Վիլֆրուայի աշխատությունն ավարտվում է (ժամանակավորապես, ինչպես հույս ունի հեղինակը) մի երկար «Ծանուցում»-ով, որն իրականում հայկական հանրագիտարանի մի իսկական ծրագիր է:

«Համարձակվում եմ հուսալ, որ այն մորթությունն ու այլազանությունը, որոնք այս աշխատության առանձնահատկությունն են կազմում, հանդուրժելի պիտի դարձնեն նրա ընթերցումը: Այն կասկածն ունեմ սակայն, թե ընթերցողները կցանկանային հավանաբար, որ սույն աշխատությունն ունենար դեռևս ինչ-որ ավելի մի բան: Անտարակույս նրանք իրավունք ունեն ինձանից պահանջելու մի տեսակ համառոտ կրկնությունն այն ամենի, ինչ տրված է ծանոթությունների մեջ, որով նրանք կուզենային,

⁵ Այս գրվածքի մի այլ փոփոխակի մասին տե՛ս Բեռնար Ռաիե, Անդամալույծը և հարույցյալ Քրիստոս: Հայերեն պարականոն գրքերի կյանքը, Ապոկրիֆիա 8, 1997, էջ 111-119:

ըստ մյուսերի կարգի, հավաքված տեսնել ամեն ինչ, որ վերաբերում է հայերի կողմից մշակված գիտություններից կամ արվեստներից յուրաքանչյուրին: Ես այստեղ պետք է ընդգրկեի, օրինակ, այս ժողովուրդների աստվածաբանությունը և նույն հոդվածի մեջ համախմբեի թե՛ աստվածաբաններին և թե՛ այն գործերը, որոնք դուրս են եկել նրանց գրչից: Ընթերցողները մի ակնարկով հաճույքով կտեսնեին տաղերի, հոգևոր երգերի և քանաստեղծական գրվածքների վերնագրերը՝ դրանց հայ հեղինակների անուններով համղերձ: Նրանք մեծ քաղականությամբ մեկ զվիսի մեջ կիմանային, թե որոնք են Հույն Եկեղեցու կողմից ստեղծված այն գործերը, որ հայերը թարգմանաբար պահպանել են մեզ համար, և որոնք դեռևս լույս չեն տեսել: Ես համոզված եմ մամնապես, որ նրանք շնորհակալ կլինեին ինձանից, եթե ես համեմատեի հայերեն թարգմանություններն այն բնագրերի հետ, որոնցից կատարվել են դրանք: Եվ, վերջապես, նրանք իրավունք ունեն ինձ հարցնելու, թե ինչո՞ւ չեմ տալիս գոնե հայ թագավորների ժամանակագրական ցանկը և համառոտ մի տեղեկություն այս մեծ Եկեղեցու կաթողիկոսների մասին:

Խոստովանում եմ, որ ես կգամզատվեի իմ ընթերցողներից, եթե նրանք ինձանից չպահանջեին ոչ միայն այն, ինչ մշեցի վերևում, այլ նաև ուրիշ շատ բաներ տակավին, որոնց մանրամասն թվարկումն իսկ շատ կերկարեր: Խնդրում եմ նրանց ուշադրություն դարձնել, որ եթե այս քոլոր բաների վերաբերյալ իմ աշխատությունը լույս տեսներ այժմ, ապա այն կլինեի ժամանակից շուտ կատարված և թերի մի գործ: Սպասում եմ նոր տեղեկություններ քաղել հայերեն ձեռագիր և տպագիր այն գործերից, որոնք դեռ պետք է ուսումնասիրեմ: Հսկայական աշխատանք ունեմ տակավին կատարելու, որպեսզի կարողանամ այդ գործերի մասին տալ ինչ-որ բան այնքան կատարյալ, ինչքան դա ցանկալի և հնարավոր է գլուխ բերել: Արդ, որպեսզի ընթերցողները համոզված լինեն, որ ես ուզում եմ հասարակությանը պարզել հայ գրականության վերաբերյալ այնքան օրինական և միևնույն ժամանակ անհրաժեշտ այդ գոհունակությունը, խնդրում եմ, որ թույլ տրվի ինձ ներկայացնել այստեղ այն, ինչ ծրագրել եմ, հենց որ Նախախնամությունն ինձ միջոցներ տա շարունակելու իմ աշխատանքը Հայաստանի մասին:

Հայերեն լեզվով ձեռագիր և տպագիր հատորների իմ ուսումնասիրման ընթացքում ես նկատի եմ ունեցել երեք բան. առաջին՝ Թագավորական գրադարանին և հետագայում նաև ամբողջ հասարակությանը ծանոթացնել այդ հատորների թվանդակությանը և դրանով իսկ գոհունակություն պատճառել նրանց: Երկրորդ՝ մտածել եմ իմ անձնական օգուտի մասին և այդ աշխատանքով ցանկացել եմ ավելի խորանալ այս ազգի լեզվի մեջ և իմանալ նրան վերաբերող ամեն ինչ: Երրորդ՝ ջանացել եմ այս լեզվի ուսումնասիրման համար անհրաժեշտ մի լուսամուտ բաց անել նրանց առաջ, ովքեր հետագայում սովորելու են հայոց լեզուն, մի լուսամուտ, որը կարողանա նրանց աշխատանքի վրա սփռել հնարավոր ամբողջ լույսը, և դա, բնականաբար, տեղի կունենա, երբ նրանք ընդհանուր գաղափար ունենան թե՛ հոգևոր և թե՛ աշխարհիկ Հայաստանի մասին:

Պե՞տք է ավելացնեմ նաև մի չորրորդ տեսակետ, որ պակաս կարևո-

րության չի ներկայացնում: Հասարակությունն ավելի մեծ հաճույքով չի՝ ընդունի, և մրա համար ավելի օգտակար չե՞նք լինի այն գործերը, որոնք կտրվեն հետագայում, երբ մա արդեն նախապատրաստված կլինի դրանց՝ ընդհանուր և հաճախ մասնավոր տեղեկությունների միջոցով, որոնք ցրված կլինեն այն ցուցակի մեջ, որի առաջին մասն ընթերցվեց այստեղ: Այս նպատակով է, որ ես կազմել և դասավորել եմ 1730 թ. Կ. Պոլսից բերված ձեռագրերի ցուցակը: Այժմ ահա թե ինչ է մնում ինձ անելու՝ գոհացում տալու համար գիտություն և ճաշակ ունեցող անձանց սպասումին:

ա) Ուսումնասիրելու եմ հայերեն այն ձեռագրերը, որոնք Թագավորական գրադարանում էին գտնվում նախքան 1730 թվականին Կ. Պոլսից բերված ձեռագրերը:

բ) Ուսումնասիրելու եմ այնուհետև նույն լեզվով գրված այն ձեռագրերը, որոնք գտնվում են Կոլբերյան⁶ գրադարանում, որը Նորին Ամենապատվություն Կարդինալը սվեց Թագավորական գրադարանի գեղեցիկ դարության նկատմամբ իր ունեցած սիրո պատճառով:

գ) Ապա գալիս եմ այդ նույն լեզվով գրված գրքերը, ոչ միայն Թագավորական գրադարանում եղածները, այլ նաև այն գրքերը, որ կարող եմ գտնել որևէ այլ տեղ:

դ) Թախանձագին խնդրելու եմ Հայր Բինյոնին, որ մի նամակ գրել տա և ուղարկի Վենետիկ, որտեղ հայերն ունեն մի տպարան, որպեսզի նրան ուղարկեն հայերեն լեզվով գրված տպագիր գրքերի մի ցուցակ: Ես այդ ցուցակը կհամեմատեմ Թագավորական գրադարանի տպագիր գրքերի հետ և հույս ունեմ, որ Հայր Բինյոնը կբարեհաճի բերել տալ այն, ինչ կարող է պակասել մեզ:

ե) Հայաստանի մասին հույների և լատինների կողմից գրված ոչ մի բան բաց չեմ թողնելու և այդ գործերից յուրաքանչյուրի մասին նույնպես տալու եմ առանձին համառոտ տեղեկություններ:

զ) Կարդալու եմ դեպի Հայաստան կատարված ճանապարհորդություններից նվիրված ուղեգրությունները և դրանց մասին պատրաստելու եմ համառոտ ծանոթություններ: Այդ ծանոթությունները պատրաստելու եմ հետևյալ սկզբունքով. ընտրել այն, ինչ կգտնեմ, որ ոչնչով հակառակ չէ Հայաստանի պատմությանը, բարքերին ու սովորույթներին, և միևնույն ժամանակ նկատի ունենալ այն, ինչ կարող է սխալ կամ պակասավոր լինել այդօրինակ գործերի մեջ: Ես չեմ մոռանալու, օրինակ, ի նկատի ունենալ, որ Տավեռնին⁷, երբ խոսում է հայերի մկրտության մասին, մեզ հաղորդում է չափազանց անհավաստի մի տեղեկություն: Ինչ որ ես ասել եմ այդ Խորհրդի կատարման մասին Գ, ք ծանոթագրության մեջ, կարելի է համեմատել Տավեռնինի գրածի հետ («Ժամապարհորդություն ի Պարսկաստան», գիրք 4, գլ. ք):

է) Վերջապես խնդրելու եմ գիտակ անձանց, որ բարի լինեն իրենց

⁶ Ժան-Բատիստ Կոլբեր (1619-1683): Ֆրանսիացի անվանի պետական գործիչ, որը 1686 թ. հիմնադրեց ֆրանսիայի Գիտությունների Ակադեմիան և քաջալերեց արվեստներն ու դարձրեց:

⁷ Ժան-Բատիստ Տավեռնին (1605-1689): Ֆրանսիացի ճանապարհորդ, որ ուղևորություններ է կատարել Պարսկաստան և Հնդկաստան:

լուսաբանություններով օգնելու ինձ որքան իմ կատարելիք հետազոտությունների, նույնքան և իմ աշխատության ծրագրի և այն գործերի ընտրության մեջ, որոնք տեղ են գտնելու այնտեղ:

Բայց ես հույս ունեմ մամալամդ, որ Հայր Բիմյոնը, որ չափազանց մուրք ճաշակ ունի, կբարեհաճի թույլատրել ինձ, որ ես նրան համարեմ իմ աշխատության ղեկավար, աշխատություն, որ կարող է անհրաժեշտ ճշգրտությամբ և հմտությամբ իրագործվել միայն այն դեպքում, եթե կատարվի նրա հովանավորության ներքո:

Մի անգամ որ ես ամբողջացնեմ այս աշխատությունը, որ այնքան էլ ընդարձակ չէ, ինչքան ենթադրվում է, դրա ծրագրի իրագործումը, որի մասին մախապես խոսել եմ, կլինի իր տեղին և հարմար ժամանակին, քանի որ հավաքած կլինեն արդեն անհրաժեշտ բոլոր նյութերը այս մեծ գործի կառուցման համար:

Այն ժամանակ ես հնարավորություն կունենամ ավելի լայնորեն և հաստատ կերպով խոսելու հայերեն գրքերի և դրանց հեղինակների մասին: Երբ ես հավաքած լինեմ ավելի շատ թվականներ, կկարողանամ ավելի վստահորեն ճշտել այս կամ այն թագավորության կամ եպիսկոպոսական իշխանության տևողությունը և ցույց տալ յուրաքանչյուր հեղինակի ապրած ժամանակաշրջանը:

Ես ուշադիր քննելու եմ այն ճառերը, որոնք վերագրվում են որոշ հույն Հայրերի, թե իրոք նրանց են պատկանում: Ես բաղդատելու եմ մեր ունեցած գործերը հայերի կողմից պահպանված և մեզ մոտ գտնվող դրանց հայերեն թարգմանությունների հետ, որոնք բնավ չեն տպագրվել՝ տեսնելու համար, օրինակ, թե Սուրբ Մեդիտոս Ամտիոքացու՝ Կ. Պոյսի Ա Տիեզերական ժողովում արտասանած ճառը, որը վերագրվում է Սուրբ Գրիգոր Նազիանզացուն (այս անունով է, որ հայերը մեզ տալիս են այդ ճառը, բայց հույներն այդ գործը մեզ տալիս են Սուրբ Գրիգոր Նյուսացու անունով) իսկապես՝ պատկանում է Եկեղեցու այս մեծ Հոր գրչին, եթե այն տրվել է: Ընթերցողների ուշադրությանն եմ հանձնելու, ինչպես այդ անուն եմ հենց այժմ, որ հայերը պահպանել են Եվսեբիոս Կեսարացուց հատվածներ, որ մենք չունենք. օրինակ՝ Սուրբ Պետրոս Ալեքսանդրացու մահատակության պատմությունը, որը գտնվում է Մատրնոսիոնում (Բ, թերթ 91) և որը քաղված է այս մեծ գրողի «Եկեղեցական պատմության» 5-րդ գրքից: Ես այդ կտորը փնտրել եմ Պր. դը Վալուայի կողմից հրատարակված գրքում և այնտեղ չեմ գտել: Ես Եվսեբիոսի Պատմության 8-րդ գրքում (գլ. 13, էջ 252) կարդացել եմ միայն, որ Եվսեբիոսն այն խոստացել է: Երևում է, որ մա այն տվել է, իսկ մենք չունենք, բայց հայերը պահպանել են այդ կտորը: Նույնը կարելի է ասել Սուրբ Ամտոմիոսին վերաբերող մի այլ կտորի մասին, որը ես չեմ գտել հիշյալ պատմիչի մոտ, և սակայն այն կա Մատրնոսիոնում (Բ, թերթ 95), որպես «Եկեղեցական պատմությունների» քաղված մի հատված:

Վերադառնում եմ իմ ծրագրին: Ընորհիվ իմ ձեռք բերելիք ծանոթությունների, ես ավելի հստակ պատկերացում եմ ունենալու հայ բանաստեղծության մասին, քանի որ տպագիր գրքերն ինձ հայտնի են դարձնելու շատ հայ բանաստեղծների գործերի, որոնք դեռևս չեն

կարդացել: Հայաստանի պատմության մասին ձեռք եմ բերելու նոր և ավելի լայն տեղեկություններ՝ կարդալով քերթողաճայր Մովսես Նորբնացու Պատմությունը: Թագավորական գրադարանի աստրական ձեռագրերում պրպտումներ եմ անելու՝ իմանալու համար, թե մենք ունենք արդյոք Միքայել Աստրի Պատրիարքի համառոտ Պատմության բնագիրը, որի մասին խոսել եմ Լ ծանոթագրության մեջ:

Հայց ո՞վ պիտի տա ինձ մի աշխատություն Հայաստանի աշխարհագրության մասին: Ես իմ ձեռքի տակ ունեմ վարդան Արևելցու կողմից պատրաստված շատ պակասավոր մի գիրք, որտեղ մա չի նշում ո՛չ այս կամ այն վայրի տեղագրությունը, ո՛չ էլ գավառների աշխարհագրական դիրքը: Դա ավելի շուտ Հայաստանի քաղաքների և վանքերի անունների մի ցանկ է, քան թե աշխարհագրություն: Ցանկայի է և նույնիսկ անհրաժեշտ, որ շվեդացի այն ազնվական ճանապարհորդը, որն այժմ Կ. Պոլսում սպասում է հարմար ժամանակին՝ անցնելու համար Հայաստան, մասնավոր հակում ունենա այդ գիտության հանդեպ և իմանա լեռ բարձրանալ յուրաքանչյուր գավառում, ուր հարկ կհամարի ճանապարհորդել: Աշխարհագրական այդ գիտելիքներն անհրաժեշտ են նրան, որպեսզի մա կարողանա ճշգրիտ կերպով որոշել և նշել ինչպես այս մեծ թագավորության գավառների, այնպես էլ նրա նշանավոր քաղաքների և վայրերի աշխարհագրական դիրքը Հայաստանի պատմության մեջ, քանզի մենք այդ օգնությունը կարող ենք ստանալ միայն մի մարդուց, որն անձամբ եղել է այդ վայրերում:

Ես չեմ հավակնում հայագիտական իմ ուսումնասիրությունների շարքում դասել հայկական երաժշտությունը կամ հոգևոր երգերը: Միայն այդ երկրի բնիկները կամ նրանք, ովքեր երկար ժամանակ այնտեղ են ապրել, նրա՛նք միայն կարող են գաղափար տալ այդ մասին: Սակայն ես կաշխատեմ ցույց տալ հայկական ամենահայտնի օրհներգերի, տաղերի և շարականների ժամանակը և դրանց հեղինակներին:

Կարո՞ղ եմ մոռանալ Սուրբ Գրքի հայերեն այն գեղեցիկ թարգմանությունը, որ կատարվել է հունարեն բնագրից, բայց վերանայվել և կատարելագործվել է աստրական բնագրի հիման վրա մեծանուն Մովսես Նորբնացու, հուչակավոր Դավիթ փիլիսոփայի և գիտնական Մամբրե վերձանողի կողմից, որը եղել է հայկական գրերի ստեղծող Մեսրոպ Մաշտոցի աշակերտը: Իհարկե չեմ կարող մոռանալ: Ես ցույց եմ տալու, որ եթե այդ թարգմանությունն ունի թերություններ, ինչպես մյուս բոլոր թարգմանությունները, համեմայն դեպս դրանք շատ փոքր թիվ են կազմում: Բացի դրանից, այդ թարգմանությունը հանդիսանում է ճարտարախոսության և պերճագեղության սքանչելի մի օրինակ ամեն տեսակետից: Հայր Լը Բյոյոնը («Կրոնական ծեսերի պատմություն», հատ. 3, էջ 44) սխալվում է՝ կարծելով, թե այդ թարգմանությունը կատարվել է 410 թ., քանի որ մեր հայ թուրք հեղինակները հայտնում են, որ այն կատարվել է 426 թվականին, այսինքն՝ հայերեն տառերի գյուտից 20 տարի հետո և Սուրբ Ժերոմի մահից 40 տարի անց: Այս վերջինին ենք պարտական մեր Վուլգատայի թարգմանության մեծագույն մասը:

Ես կաթողիկե հեղինակներին և հերձվածող գրողներին հստակորեն

պիտի տարբերեմ միմյանցից: Պիտի աշխատեմ ուղղափառ Հայրապետ-
ներից առանձնացնել այն Հայրապետներից, որոնք եղել են հերձվածի
հեղինակները կամ նրանց սատարողները, և պիտի փորձեմ նրանցից
յուրաքանչյուրի հանդեպ ցույց տալ այն արդար մոտեցումը, որին արժանի
են նրանք իրենց պերճախոսությամբ և անձնական տաղանդով:

Մոտիկից պիտի քննեմ հույն, ասորի և այլ հեղինակների բազմաթիվ
գործերից հայ գիտնականների կատարած թարգմանությունները և պիտի
ջանամ այդ թարգմանությունների մասին տալ ճիշտ և վստահելի
մեկնություն:

Վերջապես հույս ունեմ, որ ոչինչ չեմ մոռանա այն ամենից, ինչը
կարող է նպաստել հստակ և ճշգրիտ մի գաղափար տալու ինչպես
հոգևոր, այնպես էլ աշխարհիկ Հայաստանի և նրան վերաբերող ամեն
ինչի մասին:

Իմն ամսվա և օրական տասներկու ժամվա շարունակական աշխա-
տանքը, մեկը մյուսի վրա քարոզելով, բնականաբար իրավունք է տալիս
իմն մի քիչ հանգստանալու: Շուկն պիտի քաշեմ և խաղաղությամբ պիտի
սպասեմ, թե ի՞նչ որոշում կկայացնեն հայկական մի գրադարանի
վերաբերյալ, որը ես ծրագրել եմ ստեղծել»:

Թվում է, թե այս ընդարձակ ծրագրերի իրականացման համար սպաս-
ված թագավորական օժանդակությունը, դժբախտաբար, չի հատկացվել:
Սակայն Վիլֆրուան իրեն հետևող աշակերտներ է ունեցել, մասնա-
վորապես Հայր Պիեռ Սիմոն Լուրդեն, որով նույնպես արժե հետաքրքրվել:
Նա է, որ Զովանցի դը Սերպուսին է հանձնել Վիլֆրուայի վերոհիշյալ
ձեռագիրը, որից Սերպուսը հատվածներ է հրատարակել իր «Օսմանյան
կայսրության Եմթակա հայ ազգի կրոնի և քարոշականի վերաբերող
ժամանակագրական հիշատակությունների պատմական ամփոփում»
(Վեներիկ, 1786) աշխատության մեջ: Իսկ Սերպուսի սույն աշխատու-
թյունը, իր հերթին, օգտագործվել է Բելլոյի կողմից նրա «Փորձնական
շարադրանք հայոց լեզվի մասին» աշխատության մեջ, որը Շահան դը
Սիրպիետի (Շահան Զրպետյան) դասավանդության առաջին ձեռնարկն է
եղել Փարիզի Արևելյան կենդանի լեզուների հատուկ դպրոցում:

Այսպիսով, հայագիտության նախակարապետ Գիյոմ դը Վիլֆրուայի
գեղեցիկ կերպարը, նրա ոգևորությունը հայ մշակույթի հանդեպ, չի ջնջվել
պատմության էջերից:

ՃԻՆՆՈՒՄԵՆԻՑ ԹԱՐԳՄԱՆԵՑ

ԳԱՐԳԵՎ ԸԱՀԱՍՁՅԱՆԸ

⁸ Հայազգի Ժակ Շահան դը Սիրպիետը (Շահան Զրպետյան) եղել է Փարիզի Արևելյան
կենդանի լեզուների քարծրագույն դպրոցում հայագիտության ամբիոնի հիմնադիրը և
ֆրանսերեն լեզվով գրված առաջին հայերեն քերականության հեղինակը: Հայկական
ամբիոնի ստեղծումը և հայերենի ուսուցման օրինականացումն այդ դպրոցում վերագրվում
է այն պատահական հանդիպմանը, որը տեղի է ունեցել 1798 թ. Իտալիայում Շահան
Զրպետյանի և Նապոլեոն Ա-ի միջև՝ որին, հետագայում, Շահանը մատուցել է դիվանա-
գիտական քաղույն ծառայություններ (Մ. Թ.):